

3

06

4-82

ԹՌ յն.

3

71

ՀԱՅՈՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԱԿԱԳԻՑ ՏԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Նուկր Յովհաննես եւ Կարապէս Խալա-
բեաններից՝ ի յիշատակ իրենց եղբօր՝ պրօք.

Գրիգոր Խալաբեանի:

N83

н-82


т. т. з. у.

Никого незнакомого и
незначительного для дви-
ла не содержитъ

, , 23, , апрѣля . 1909г.

Борис Финъ


2001



2010

Дозволено цензурою. 9 Января 1896 года. СПБ.

Типографія А. Замініана и В. Кирліана.



Անցեալ 1894 թ. Սեպտեմբերի սկզբներին Մողբոկի
ս. Աստուածամօր Եկեղեցու ծխականների ժողովը վեց
հաշուետես ընտրեց՝ նոյն Եկեղեցու երեցիով հաշիւները
քննելու համար: Աստրախանի Կոնսիստորից հաստատու-
թեան պաշտօնական թուղթն ստանալուց յետոյ, իինդ
հաշուետեսը (մէկը չի մասնակցում) քաղաքից քացակայ լի-
նելու պատճառով) ամենայն բարեխսդութեամբ եւ եռան.
Գովզ ծեռնամուս եղան այս խճուած գործի քննութեան:
Արդիւնքը ծխականների ժողովին պէտք է ներկայացնէին,
բայց գործակալ քահանան եւ Կոնսիստորն ամեն կերպ աշ-
խատում էին իրանց յայտնի պատճառներով խանգարել
գործի կանոնաւոր ընթացքը. հաշուետեսների յանձնա-
ժողովը Դեկտեմբերի 7-ից սկսած մինչեւ Ապրիլի սկիզբը
վեց անգամ թղթով եւ հեռագիրներով դիմել է Կոնսիս-
տորին եւ խնդրել, որ ծխականների ժողով նշանակէ մի
ուրիշ քահանայի նախագահութեամբ, որովհետեւ գործա-
կալ քահանան՝ իբրեւ մասնակցող Եկեղեցական գումար-
ների կորուստներին, չը կարող նախագահ լինել. բայց
Կոնսիստորը անգէտ ծեռանալով, ժողով անելը կրկին ու
կրկին յանձնում էր գործակալ քահանային, որը եւ այն-
պէս ոչ մի ժողով չարեց: Մի օրինակ եւս. 1891 եւ 1892 թուի
հաշուեմատեանները Կոնսիստորը գգծում էր եւ չը ու-
ղարկում, թէեւ յանձնաժողովը քանից դիմել էր. բայց
վերջն էլ ուղարկելուց յետոյ, երբ Կոնսիստորն իմացաւ,
որ յանձնաժողովը այդ մատեանների մէջ գտել է մօտ իինդ
հազար թ. կորուստ, խստիւ իրաման գրելով անյապաղ
յետ էր պահանջում այդ մատեանները:

ՀԱՅՐԱՅԻ ՎԻՐԱՊԻ ՎԻՇԱԿԱՆ
ԱԹՐԵԱՆ ԱՌԱՋԱ ՏԱՐԵՎԱՐԵՐ
28 ՄԱՅԻՍ 1919 թ.



206

մ-89

ԱՀ.



ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓՈՆԵԿԻՆ ԻԲՐԵՒ ՔՆՆԻԶ
ՄՈԶԴՈԿՈՒՄ:

Անցեալ 1894 թ. Սեպտեմբերի սկզբներին Մոզդոկի
ս. Աստուածամօր Եկեղեցու ծխականների ժողովը վեց
հաշուետես ընտրեց՝ նոյն Եկեղեցու երեցինի հաշիմները
քննելու համար: Աստրախանի Կոնսիստորից հաստատու-
թեան պաշտօնական թուղթն ստանալուց յետոյ, իինգ
հաշուետեսը (մէկը չի մասնակցում) քաղաքից բացակայ լի-
նելու պատճառով) ամենայն բարեխղճութեամբ եւ եռան.
դով ձեռնամուխ եղան այս խճնուած գործի քննութեան:
Արդիւնքը ծխականների ժողովին պէտք է ներկայացնէին,
բայց գործակալ քահանան եւ Կոնսիստորն ամեն կերպ աշ-
խատում էին իրանց յայտնի պատճառներով խանգարել
գործի կանոնաւոր ընթացքը. հաշուետեսների յանձնա-
ժողովը Գեկտեմբերի 7-ից սկսած մինչեւ Ապրիլ սկիզբը
վեց անգամ թղթով եւ հեռագիրներով դիմել է Կոնսիս-
տորին եւ խնդրել, որ ծխականների ժողով նշանակէ մի
ուրիշ քահանայի նախագահութեամբ, որովհետեւ գործա-
կալ քահանան՝ իբրեւ մասնակցող Եկեղեցական գումար-
ների կորուստներին, չէր կարող նախագահ լինել. բայց
Կոնսիստորը անգէտ ձեւանալով, ժողով անելը կրկին ու
կրկին յանձնում էր գործակալ քահանային, որը եւ այն-
պէս ոչ մի ժողով չարեց: Մի օրինակ եւս. 1891 եւ 1892 թուի
հաշուեմատեանները Կոնսիստորը ձգձգում էր եւ չէր ու-
ղարկում, թէեւ յանձնաժողովը քանիցս դիմել էր. բայց
վերջն էլ ուղարկելուց յետոյ, երբ Կոնսիստորն իմացաւ,
որ յանձնաժողովը այդ մատեանների մէջ գտել է մօտ իինգ
հազար ր. կորուստ, խստիւ իրաման գրելով անյապաղ
յետ էր պահանջում այդ մատեանները:

Վերջին երեցփոխ պ. Ս. Կաթենիկեանցի զեղծումները եւ կեղծիքները բացուելուց յետոյ, Դեկտեմբերի 6-ին ծխականների ժողովը երեցփոխանական գործերը կառավարել առժամանակ յանձննել էր հաշուետեսներին մինչեւ Կոնսիստորի կարգադրութիւնը։ Որովհետեւ Դեկտեմբերի 7-ից յետոյ ինարաւոր չեղաւ ծխականների ոչ մի ժողով գումարել տալ կամ երեցփոխի ընտրութեան կամ հաշուետուութեան համար եւ յանձնաժողովը, անկարող լինելով այլ եւս երեցփոխանական գործերը շարունակել, հարկադրուեցաւ Ապրիլի 3-ին իր երկու անդամի միջոցով դիմել Նորին Վեհափառութեան եւ անձամբ ցոյց տալով հաշուետեսութեան արդիւնքը, գործակալի եւ Կոնսիստորի գեղցումները ու ապօրինի ընթացքը, խնդրել որ քննիչնշանակուի ո՛չ թէ միայն երեցփոխանական հաշիւներից, այլ եւ եկեղեցական-ծխական բազմադիմի եւ վերին աստիճանի անկարգ ու խառնաշփոթ գործերի քննութեան համար։

Հաշուետեսների խնդրին Վեհափառ Կաթողիկոսը մեծ նշանակութիւն տալով՝ երեք անգամ իեռագրով իրամայած է եղել Աստրախանի թեմի կառավարիչ Խորէն Եպ. Ստեփանէին (ինչպէս ինքը Խ. Եպ. յայտնեց) որ Մոզդոկ գնայ երեցփոխանական հաշիւները եւ եկեղեցական-ծխական գործերը քննելու, նախապէս պաշտօնից արձակելով գործակալին։ Ապրիլի 30-ին Խորէն Եպիսկոպոսը Մոզդոկ ժամանելով, եկեղեցում յայտնեց որ Կաթողիկոսի իրամանով քննիչ նշանակուած եւ շնորհակալութիւն արաւ, որ իրան լաւ ընդունելութիւն ցոյց տուին։

Եյստեղ պէտք է յիշել որ Խորէն Եպիսկոպոսը նախապաշարուած եւ կատաղած էր Եկել այն մարդկանց վրայ, որոնք իբր թէ պատճառ էին դարձել իր անժամանակ Մոզդոկ գալուն։ Նա չէր ուզում հասկանալ որ իր Մոզդոկ գալու իսկական պատճառը իէնց իր հետ եկած Կոնսիստորի նախանդամ Յ. ա. քահանայ Բունիաթեանցն էր։ Բացի Վերօգրեալ օրինակներից իբրեւ ասածներիս ապացոյց մի միջնադէպ եւս բերենք. Վ.Ե. Կաթողիկոսի իրաման-հեռագրում յիշուած է եղել. «Մոզդոկ գնալիս տանել եւ

1885 Թուից սկսած բոլոր երեցփոխանական հաշուետատեանները։ Սակայն ի զարմանս Խորէն Եպիսկոպոսի՝ Մայիսի 1-ի ժողովում Յ. ա. քահանայ Բունիաթեանցը յայտնում է, թէ մատեանները չի վերցրել, միայն մի քանի թըզ-թեր է բերել եւ թէ ինքը անգիր գիտէ բոլորը. ինչ որ հարկաւոր է՝ կարող է ասել։ Այդ պատասխանից յետոյ խիստ վայրանում է Խորէն Եպիսկոպոսը եւ գոչում, «տասն անգամ ասելին, Յովսէփ քահանայ, մատեանները վերցրել ես—վերցրել եմ, վերցրել ես—վերցրել եմ։ Նոյնքան անգամ էլ քարտուղարին եմ ասել։ Այս դեռ Կաթողիկոսի իրամանն է որ այդպէս ենք կատարում. . . փտա՛ծ ենք, փրտա՛ծ ենք, փտած ենք. . .» Խորէն Եպիսկոպոսը կարծում էր թէ այս գործը մի կուսակցական Մակարդ է իր հակառակորդների կողմից սարքած, թէ եւ նրան միշտ հանգըստացնում էին եւ հաւատացնում, որ Մոզդոկում կուսակցական կուիւներ չը կան, եւ թէ այն գործը, որի համար նա նշանակուած է, ինքնաճանաչութիւնը զարթացնող մի նպաստաւոր շարժառիթ է, որովհետեւ այստեղ իրանց իսկական կերպարանքով երեւան են գալիս Եկեղեցական եւ աշխարհական դասակարգից այն անձինքները, որոնք շատ տարիների ընթացքում հասարակական գործերի լեկը իրանց ձեռքում պահելով հասցըրել են նորան այս ողբալի եւ յուսահատ վիճակին։ Խորէն Եպիսկոպոսին էր վիճակուած այս խթնուած եւ ապականուած ասպարէզը մաքրելու եւ ժողովրդեան բարերարը դառնալու, մանաւանդ որ ժողովուրդը եւ նրա բարեմիտ անդամները պատրաստ էին ամենայն կերպ նրան օգնելու։ Բայց տեսնենք թէ նա ինչպէս կարողացաւ լուծումն-տալ-այդ խնդրին։

Հաշուետառուգութեան գործը մի կերպ վերջացաւ միայն հաշուետեսների աջակցութեամբ եւ համբերատարութեամբ։ Նա կարող էր խանգարուել. ա) որովհետեւ գերապատիւ քննիչը չէր հետեւում քննութեան լուրջ եւ խոհեմ պահանջներին. բ) նրա նախապաշարուած տրամադրութիւնը՝ թէ քննիչ նշանակելով իրան ստորացըրել են, չէր փարատուում եւ միշտ կրկնում էր՝ «այս իմ տեղը չէ» եւ գ) միշտ նրա մօտ էին մեղադրուող երկու քահանա-

ները—Յ. ա. քահանայ Բունիաթեանցը, որը կարծես, բերուած էր հաշիւները վերաստուգելու համար եւ իրօք էլ նա էր վերաստուգողը, եւ Գ. ա. քահանայ Տուրփայեանցը: Մայիսի 9-ին կայացած ընդհանուր ժողովում Խորէն եպիսկոպոսը յայտնեց Թէ՛ վերաստուգելով հաշուետես յանձնաժողովի բոլոր եղբակացութիւնները, գտաւ Ֆիշտ: Այդ ժողովում հաշուետուութիւնից երեւեցաւ. ա) վերջին երեցփոխ Ս. Կաժենիկեանցը գործակալ Թ. ա. քահանայ Խոսրովեանցի գործակցութեամբ Թէ՛ վատնելով եւ Թէ իւրացնելով Եկեղեցու գումարներից պակասացը Ել է 1037 թ. 97 կ. եւ բ) հանգուցեալ երեցփոխ Գ. Թուշմալեանցի կեղծ կազմած հաշիւների մէջ պակասում է Եկեղեցական գումարներից 4749 թ. 30 կ.: Այս երեցփոխի հաշուեմատեանների մասին գործակալ Թ. ա. քահանայ Խոսրովեանցը երեցփոխի մահուանից յետոյ գրում է Կոնսիստորին, Թէ մէկ ու կէս տարուայ (1892 եւ 1893) հաշիւները (48 հազար դրամագիսի եւ 4 հազար Եկամտի) ան գի թ են պահուած: Կոնսիստորը՝ փոխանակ անմիջապէս քննութիւն նշանակելու, միայն նախատում է գործակալին, որ համարձակուելէ յայտնելու Թէ հաշիւներն անգիր են պահուած եւ մի քիչ յետոյ համակերպուելով, հաստատում է նոյն գործակալի առաջարկած եւ ոչ Թէ ծխականների ընտրած հաշուետեսներին, որոնցից մէկը՝ գործակալի Եղբայր փոխ-գնդապետ Խոսրովեանցը, հանգուցեալ երեցփոխի Եղբօր աները՝ կազմում է կեղծ հաշիւները, իսկ միւսը—հանգուցեալ երեցփոխի քննակալ պ. Մ. Կաժենիկեանցը առաջինն է ստորագրում կեղծ մատեանների տակ: Յանձնաժողովը՝ պահանջելով Կոնսիստորից այդ կեղծ ու արխիս մտցրած մատեանները, որը՝ ինչպէս վերն ասուեցաւ, շատ դժուարութեամբ էր տալիս Կոնսիստորը, գտնում է խոչը կեղծիքներ. այդ 1892 թուի մատեանում նշանակուած են իբրեւ Հոր առևտուած 4032 տոմսեր, այն ինչ այդ տոմսերն առնուած են 1891 թուին եւ մուծուած այդ թուականի մատեանի մէջ: Այդ տոմսերն այնպիսի վարպետութեամբ են կրկին մըտցրած 1892 թուի կեղծ մատեանի մէջ, որ շատ դժուար է գտնելը—տեղերը փոխած է, գները աւելացրած եւ ուրիշ

տոմսերի իետ միացրած: Այդ կեղծիքը ծածկելու համար աշխատել է նախկին գործակալ Տէր-Թադէոսը եւ կեղծ կազմելուն եռանդով մասնակցել է այժմեան գործակալ Տէր-Գաբրիէլը: Սրա մասնակցութիւնը ապացուցուած է իր որդի տիրացու Մովսիսի եւ իր ձեռքով գրած կեղծ սեւագրութեամբը (կեղծ մատեանի) եւ հետեւեալ տոմսակով: Փոխ-գնդապետ պ. Ա. Խոսրովեանցը գրում է. «Տէր-Գաբրիէլ, Դեկտեմբեր ամսեա հաշիւը վերցացրած չէ, եւ չի երեւում առ և Ցունուարի 93 ամի որքան է մնում: Խնդրեմ ուղղէք: Ա. Խոսրվը»:

Տէր-Գաբրիէլը պատասխանում է.

«Որքան դէս դէն արի, չէ լինում: Դեկտ. վերջում բան-կային բիլեթներ մնում են 48 հազարից աւելի, այդքան գումար չը կայ-ինքս էլ չը գիտեմ ինչ պէտք է անել: Գաբրիէլ աւագերէց»:

Այս տոմսակը եւ կեղծ սեւագրութիւնը գերապատիւ քննիչին ներկայացրեց Կոնսիստորից հաստատուած հաշուետես փոխ-գնդապետ Խոսրովեանցը եւ խոստովանուեց Թէ՛ բանաւոր եւ Թէ գրաւոր, որ ինքն է կազմել կեղծ հաշիւների մեծ մասը, եւ այդ արել է խոնալով հանգուցեալ երեցփոխի ընտանիքին. եւ առհասարակ հաշիւները կազմելիսա' շխատել է յարմարացնել երեցփոխի մահուածից յետոյ մեացած եկեղեցական դրամին և դրյան: Այս խայտակ գործում մասն ունի, ինչպէս վերն ասուեցաւ, կեղծ մատեանի տակ առաջին տե լն ստորագրով՝ Խորէն եպիսկոպոսի համաձայնութեամբ ընտրուած նոր երեցփոխ պ. Մկրտիչ Կաժենիկեանցը, որ չէր կարող տեղեակ չը լինել իր քենակալ երեցփոխի պակասնեցրած դրամին. մանաւանդ որ իբրեւ առաջնակարգ վաճառական եւ իբրեւ հաշիւ հասկացող մարդ հասարակութեան մէջ՝ նրան աններելի է այդպիսի մի գործողութիւն, երբ մանաւանդ դորանով մոլորուել են եւ ուրիշ քիչ հասկացող ծխականները, որոնք, ինչպէս գրաւոր վկայեցին, հասկացողներին իետեւելով են ստորագրել կեղծ հաշիւների տակ: Գործակալ Տէր Թադէոսը որսացել է այդ եօթը ծխականներին (բացի Մ. Կաժենիկեանցից) ստորագրել տալով ո՞րին խա-

նութում, որին տանը, որին եկեղեցու խորանում: Սրանք են հաշուետուութեան էական կէտերը: Թէեւ եկեղեցու վնասները ժողովումը խոսացան հատուցանել, բայց ոչ մի գրաւոր ապահովութիւն չառնուեցաւ: Մինչեւ անգամ Ս. Կաֆենիկեանցի պարտքը, որ (1037 թ. 97 կ.) մի քանի պատուաւոր ծխականներ խնդրեցին իշեցնել 819 թ. 68 կ., գերապատիւ նախագահն էլ համաձայնելով առաջարկեց ժողովին՝ 200 թ. ի՞նչ անենք, բախչե՞նք: Եւ իհարկէ ժողովը մերժեց ասելով՝ ո՞ւմ փողն ենք բախչում:

Բացի հաշուետուութենից՝ այդ ժողովում գաղտնի քուէարկուութեամբ ընարուեցան երեք երեցփոխ, չորս հաշուետես, որոնք եւ մի եւ նոյն ժամանակ եկեղեցու վերանորդութեան համար հոգաբարձու պէտք է լինէին, բայց բոլորին անկանոն կերպով: Նախ որ գեր. նախագահը թոյլ տուեց քուէարկուելու եւ ընտրուելու եկեղեցական գործերի մէջ մեղադրուած պ. Մկրտիչ Կաֆենիկեանցին եւ Կարապետ նաւասարդեանցին, եւ ապա՝ առաջինին երեցփոխ հաստատեց, երկրորդին՝ հաշուետես: Երկրորդ որ՝ ս. Աստուածամօր եկեղեցու երեցփոխանութեան պաշտօնի համար միայն մի անգամ քուէարկած թիկնածուներից շարքով թէ՛ երեք երեցփոխ նշանակուեցան, թէ չորս հաշուետես հոգաբարձուներ: Մի բոպէ ենթադրենք թէ երեցփոխանութեան յարմար դատուածը ու առաջարկուածը կարող է հաշուետես եւ հոգաբարձու էլ լինել, բայց միթէ կարելի՛ է այդպիսի ընտրութիւն անել. եւ երբորդ՝ Խորէն եպիսկոպոսը ժողովին արձանագրող էր նշանակել մեղադրուող Գ. ա. քահանայ Տուրփայեանցին: Այդ ժողովում միաձայն՝ 160 ծխականի մասնակցութեամբ որոշուեցաւ, որ Սրբազնը միջնորդէ Վեհ. Կաթողիկոսի առաջ հեռացնելու այս քաղաքից Տէր Թաթէոս ա. քահանայ Խոսրովեանցին իր անտանելի վարք ու բարքի պատճառով: Գերապատիւ նախագահի առաջարկուութեամբ նոյնպէս միաձայն որոշուեցաւ, որ այսուհետեւ ինչ ծխական-եկեղեցական խնդիրներ լինին, պէտք է ժողովով վճռուին եւ ժողովից դուրս ոչ մի խնդրի եւ ոչ մի վճռուի չը պէտք է ստորագրեն: Ժողովից անմիջապէս յետոյ Յ. ա. քահանայ Տու-

նիաթեանցը ծխականներից մէկին առաջարկում է շնորհակալութեան հեռագիր տալ Վեհ. Կաթողիկոսին եւ խընդրել, որ Խորէն եպիսկոպոսին առաջարկէ առաջնորդ հաստատելու: Միւս օրն էլ փոլոցներում ստորագրական թերթ են եղել պատեցնելիս այդ մասին: Սակայն Մոզդոկում այդ չի յաջողվում... մանաւանդ որ հէնց միւս օրը գործարկալութիւնը մի մեղադրուածից առաւ եւ տուաւ նախընթաց երեկոյեան ընդհանուր ժողովում միւս մեղադրուած Գ. ա. քահանայ Տուրփայեանցին, որ բանգէտ հասարակութեան աշջում վաղուց ի վեր ընկած է: (Ոքան վարչական . . . օ sancta similitudines):—Խորէն եպիսկոպոսը մինչեւ Մայիսի 7-ը՝ այսինքն հաշուետուգութեան վերջը, գոյի էր ուսուցչական խմբից, իսկ նրանցից երկուսի հաշուետուգութեան գործում ցոյց տուած ջանքերին համակրանք արտայայտելով, պարզապէս խոստովանում էր, որ այս զեղծումներն երեւան են եղել գրանց մասնակցութեան շնորհիւ: Նա յայտնում էր իր գոհութիւնը եւ երգեցութեան ուսուցիչ պ. Նահանեանցին, որ քառածայն երգեցիկ խումբէ կազմել աշակերտներից եւ տեղացի երիտասարդներից եւ խոստովաննելով եղանակների հարազատութիւնը ու ներդաշնակութիւնը, միայն նկատեց որ մի քիչ յորդոր պէտք է երգել. նա մինչեւ անգամ, իբրև ապացոյց իր գոհունակութեան, Մայիսի 7-ին կիրակի պատարագից յետոյ նշանակ ուղարկեց երգիչներին բաժանելու: Բայց նոյն քուայ երեկոյեան՝ հաւանօրէն ենթարկուած իր շրջապատողների աղքեցութեան, սկսեց բաշարձակ թըշնամանքով վերաբերութիւնը ուսուցիչներին: Նա նախատումէր նրանց, թէ իրանց հաշուետեսութեան գործին մոսսնակցելու պատճառով՝ դպրոցները առւժել են. իսկ պ. Նահանեանցի իինդ տարուայ աշխատանքը բոլորին ապարդիւն էր համարում: Խոչ վերաբերումէ ուսուցիչների զուտ մանկավարժական գործունէութեան՝ դարձեալ բոլորովին ապարդիւն էր համարում՝ իիմնուելով բոպէական տպաւորութիւնների վրայ, որ նա ստանում էր շատ-շատ 5—10 բոպէ դասերին այցելելիս: Առաջ ենք բերում նորէն եսիսկոպոսի արած մի քանի մանկավարժական նկատողութիւն.

ները. ա) չեն եղել աշակերտական զբոսանքներ: Յայտնուեցաւ որ ոչ միայն աշակերտները, այլ եւ ամեն մի ծնող կարող է վկայել, թէ քանի զբոսանք է եղել տարուայ յարմար եղանակներին բացի այդ կարելի է տեղեկանալ ուսուցչական ժողովի արձանագրութիւններից եւ հոգեւոր իշխանութեանը ներկայացրած տարեկան հաշիւներից:

բ) Դասարանները պատկերներով եւ քարտէզներով չեն զարդարուած: Բացարուեց թէ ուսուցչական խումբը այն կարծիքին է, որ պատկերներով դասարանը զարդարելով՝ պատճառ կարելի է դառնալ դասերի խանգարուելուն, որոնց համար պատկերները կարեւոր չեն. փոքրիկ աշակերտները՝ մի քիչ դասից ծանծառանալով՝ առանց այն էլ մի ուրիշ բան են որոնում զբաղուելու: Բացի այդ՝ պատկերները միշտ աչքի առաջ լինելով սովորական են դառնում եւ իշտաքքրութիւնը կորցնում: Հարկաւոր եղած դէպքում ոչ միայն հասարակ պատկերներ են ցոյց տըրվում, այլ եւ մոգական լապտերով: Խսկ քարտէզներ կախելու կարիք չը կայ, քանի որ աշխարհագրութիւն չի աւանդվում:

գ) Դասի ժամանակ հարցերն ընդհանուրին են առաջարկվում եւ սպասվում պատասխանի, այլպիսով ժամանակ է կորչում: Աւելի լաւ է հարցերով իւրաքանչիւրին դիմել: Բացատրուեց որ մի խումբ աշակերտներ միասին զբաղեցնելու համար ամենալաւ միջոցը հարցերն ընդհանուրին ուղղեն է, որով հնարաւոր է լինում բոլորի ուշադրութիւնը գրաւել: Ճիշտ է՝ մասնաւորին էլ են հարց ուղղում, բայց միայն անուշադիր եղած դէպքում:

դ) Դպրոցի սաները բացի դասագրքերից, ոչ մի գիրք չեն կարդացել: Առաջարկուեց հարցնել իրանց սաներին եւ տեսնել այն տետրակները, ուր նշանակուած են իւրաքանչիւր աշակերտի տուած գիրքը եւ այլ նկատողութիւններ: Նոյն խսկ ծնողներն էլ են կարդում աշակերտների տարած գրքերը:

ե) Աշակերտաների եւ աշակերտուիների կուրծքն ու աչքերը վնասուած են, ծուռ են նստում եւ կարդակս գիրքը մստիկ բռնում: Բացատրուեց որ ուսուց. խումբը

աշակերտուների ու աշակերտուիների առողջութեան եւ նիստ ու կացի մասին միշտ հոգացել է եւ հոգում է, որչափ ինարաւոր է: Մի գլխաւոր արգելք՝ այն է նստարանների անյարմարութիւններ, ուսուց. խումբը չի կարողացել վերցնել. այդ հոգաբարձութիւնից է եղել կախուած եւ հոգաբարձութիւնն էլ խոստովանեց ձեր առաջ, թէ վեց տարուայ ընթացքում ոչինչ չէ արել: Խսկ ինչ վերաբերումէ աչքերն ու կուրծքը վնասուելուն, դա միայն խօսք է: Խորէն եպիսկոպոսը քանիցս ոպառնաց բժիշկ բերել եւ հաստատել, բայց դժբաղդաբար սպառնալիքը ըս կատարեց, երեւկի երկիւղ կրելով...:

զ) Ինչո՞ւ աշակերտների ազգանունները եւանց են վերջանում. Խորէնացու մէջ ազգանունների երեք վերջաւորութիւն կան՝ «եան, ուսի եւ ական»: Ինչո՞ւ ա. բաժնում ձայնագրութիւն չէք անցնում: Ի՞նչու աշակերտները 9 ժամին գալիս են, 11-ին գնում (դասացուցակը լաւ չի կարդացել) եւ այլն սոցա նման նկատողութիւններ, որոնց բացատրութիւնն աւելորդ ենք համարում դնել, քանի որ ինքն ըստ ինքեան պարզ է եւ նրանց հակասութիւններն ակներեւ են. քիչ պարապող, ոչինչ չը սովորած աշակերտները չեն կարող ֆիզիկապէս հիւծուել եւ մահացման դուռն հասնել:

Թէեւ այս նկատողութիւնների ժամանակ միշտ մասնացոյց էր անվում տեղեկանալ ուսուց. ժողովի արձանագրութիւններից, կամ տարեկան հաշիւններից, կամ ծնողներից, կամ աշակերտներից, կամ դպրոցական ծրագրից, բայց Խորէն եպիսկոպոսը կամ՝ լրութեամբ էր պատասխանում եւ կամ հարցը կտուրն էր գցում: Ոչ մի ժամանակ ոչ մի դօկումէնտով չը հետաքրքրուեց:

Խորէն եպիսկոպոսը եւ հրաւիրում էր ուսուցիչներին իրանց կարծիքը յայտնել եւ հակառակ կարծիքը շատ տըհաճութեամբ էր լսում: Գրեթէ չէր ուզում որ նկատողութիւններին բացատրութիւն տրուի: Թէեւ իբրեւ ուսուց առած մարդ՝ կարծես ուզում էր որ, ամենայն ոք ազատ կարծիք յայտնէ, բայց իբրեւ իշխանաւոր՝ չէր համբերում: Այսպիսի դէպքերում խորինդակցութիւնը աւելորդ է,

միայն մնում է իշխանաւորի կամքը: Քանիցս անգամ խընդրուեց, բայց Խորէն եպիսկոպոսը չը հետաքրքրուեց ծանօթանալ դպրոցների վեց տարուայ պատմութեան հետ, թէ ինչ դրութեան մէջ ստացուել են Գ. ա. քահանայ Տուրփայեանցից եւ ինչ դրութեան մէջ են այժմ:

Յառաջ բերենք միայն մի քանի տեղեկութիւններ. 1889—90 ուս. տարուայ սկզբումը, երբ դպրոցները Տէր-Գաբրիէլը յանձնում էր նոր ուսուց. խմբին, չը կար ոչ մի ցուցակ, ո՛չ աշակերտների, ո՛չ գրադարանի եւ ոչ կահկարասեաց, մինչեւ անգամ աշակերտների փոխադրութեան ցուցակը չը տուաւ, որ իմացուի թէ աշակերտներից որն ո՛ր բաժանմունքումն է: Միայն մի ամիս անցնելուց յետոյ ուղարկեց երեք օրագրական մատեան, որոնց ծանօթութեանց մէջ արձանագրուած էին ուսուցիչների կոփիւները, իսկ Դեկտեմբերին ուլարկեց մի վիճակագրական մատեան: Այդ էր դպրոցական գործերը եւ դորանցով պէտք էր գաղափար կազմել դպրոցների անցեալ կեանքի մասին: Միայն բաւական է այստեղ յիշել, որ գրադարանի գըրքերը ցուցակագրելիս երեւեցաւ, որ մէկի առաջին մասն է պակասում, միւսի՝ երկրորդ մասը եւ այլն. մինչեւ անգամ գըրքերի պահարանում գտնուեցաւ մի գանձանակատուփ կնքած եւ կողպած, մէջը 45 կոպ. իսկ տակը ծակած: Տէր-Գաբրիէլը այդ ծգում էր հեռացած ուսուցիչների վերայ, չը նայելով որ պահարանի բանալիները իր մօտ են եղել:

1889—90 ուս. տարին դպրոցներում եղել են 64 աշակերտ, 36 աշակերտուիի, իսկ 189^{4/5} տ. 97 աշկ. եւ 80 աշակերտուիի: Վեց տարուայ ընթացքում երկու դպրոցներն էլ երկդասեանի են վերածուած՝ գլխաւորապէս ուսուց. խմբի աշխատանքով: Այդ ժամանակամիջոցում դպրոցները մաքրուել են անարժան եւ անընդունակ ուսուցիչներից, Տէր-Գաբրիէլից, Տէր-Թադէոսից, տիրացու Նիկոլից եւ ուրիշներից:

Ուսուցական խումբը ինց առաջին տարուանից իիմնելէ աշակերտական գանձարան, որի գլխաւոր եկամուտները վեց տարուայ ընթացքում ստացուել են երգեցիկ խմբի եռանդուն աշակցութեան շնորհիւ, Թատրոնական

ներկայացումներից, դպրոցական հանդէսներից, կամաւոր նուէրներից եւ այլն:

Աշակերտական գանձարանը վեց տար. ուայ մէջ եկամուտ ունեցել է 1546 ր. 22 կ. իսկ ծախք 1513 ր. 22 կ.

Այդ գումարից օգտուել են 147 չքաւոր աշակերտ եւ 101 չքաւոր աշակերտուիի ստանալով հագուստ, ուսնաման, ուսումն պիտոյքներ, դասագրքեր, դեղ եւ այլն:

Աշակերտական գանձարանի հաշուով ձեռք են բերուել մոգական լապտեր գաղային եւ նաւթային լուսաւորութեամբ. . . 215 ր. 46 կ.

Թթուածին պատրաստելու ապարատ . 17 ր. —

Լապտերի համար 45 ընտիր պատկերներ Ս. գրքից ու հայկական կեանքից . . . 88 ր. 91 կ.

Լրագիր եւ 99 հատոր գիրք մանկական եւ ուսուցչական գրադարանի համար . . . 95 ր. 42 կ. Մի կարեմեքենայ նոր ձեւի 40 ր. —

Խորէն եպիսկոպոսը մինչեւ անգամ չը հետաքրքրուեց դպրոցական շքեղ հանդէսներով, որոնք հասարակութեան մէջ սէր էին զարթեցնում դէպի դպրոցները եւ աշխոյժ էին տալիս մանուկներին: Նա չը հետաքրքրուեց աշակերտական եւ ուսուցչական գրադարաններով, որոնց մէջ աւելացել են գլխաւորապէս վերջին երկու տարուայ ընթացքում 163 հատոր գիրք: Ուսուցչական խմբի համերաշխութեամբը, տուած փորձնական դասերովը, հասարակութեան մէջ ունեցած վարկովն եւս չը հետաքրքրուեց: Վեց տարուայ ընթացքում ընթացքում ոչ մի խուզվութիւն չի պատահել ուսուցչական խմբի մէջ, ինչպէս եղել է առաջները Տէր-Գաբրիէլի ժամանակը, որին նորից յանձնուեցաւ դըպրոցների ղեկավարութիւնը եւ որի ժամանակ ոչ մի բարեխիղն եւ գործունեայ ուսուցիչ առանց կրուի եւ գծուծ ամբաստանութիւնների չի հեռացել Մողդոկից: Մորանով պարտ ենք համարում իերքել եւ այն սխալ լուրը Մշակի և 58-ում թէ «դպրոցներում դադարեցան խուզվութիւն»

ներթ։ Դպրոցներում խոռվութիւններ չեն եղել այդ կարող է վկայել ամեն մի Մոզդոկեցի։ Դպրոցական կեանքից այս համառօտ տեղեկութիւնները յառաջ բերելով՝ չենք ուզում ցոյց տալ, թէ այս ուսուցչական խումբը դպրոցները կատարելութեան է հասցրել ոչ. երբեք ոչ։ Այլ թէ արդեօք այս ուսուցչ խումբը աշխատե՞լ է տարեց տարի թերութիւններն ուղղել, թէ ընդհակառակ տարեց տարի մի թերութիւն էլ ինքն է աւելացրել եղածների վերայ։

Համբարձման տօնին երգեցիկ խումբը չէր գնացել երգելու, որովհետեւ Խորէն եպիսկոպոսը՝ ուսուցչական խմբի եւ մասնաւորապէս երգեցողութեան ուսուցչի հետ ունեցած ընդհարումից յետոյ, նկատել էր թէ երգեցողութիւնը այնքան տաղտկալի էր, որ նա մինչեւ պատարագի վերջը մնացել է միայն ժողովրդի պատուի համար։ Այդ օրը Սրբազնի ականջները խումբը չէր գնացել երգելու։ Ի դէպէ յիշել եւ մի մասնաւոր դէպք որ լուսաբանումէ Սրբազնի անորոշ աշխարհահայցեցողութիւնը. նա եկեղեցում նկատելով երիտասարդ երգիչնենից մէկի ծեռքին եւրոպական նոտաներ' զայրանում է հակառակ համարելով Հայաստանեայց եկեղեցու ինաւանդ սովորութեան (խաւարամտին վայել մի արարք)։

Խորէն եպիսկոպոսը խմբի չերգելուց բորբոքուած՝ սկսում է եկեղեցու բեմից անպատուել ուսուցիչներին եւ երեկոյեան էլ (Մայիսի 11.-ին) ժողով է հրաւիրում բոլոր հասարակութեան միակ իր կարծիքը լսելու ուսուցիչների մասին։ Փողոցում մարդ ու կին, մեծ ու փոքր չեն մնում, բոլորն էլ այդ երեկոյեան թափվում են դպրոցի դահլիճը եւ Խորէն եպիսկոպոսն էլ ուրախանում է, որ ժողովն այդքան բազմամարդ է։ Սրբազնը նախ հարց է դնում. ժողովուրդ, ինձ հաւատո՞ւմ էք, եւ ապա հաստատական պատասխան ստանալուց յետոյ, այդ ժողովում նա հրապարակաւ եւ բացարձակ գրգռում է ժողովրդին ուսուցիչների դէմ իր անսանձ կրթերին յագուրդ տալով *); նա

*). Օտեև. Եպիսկոպոսը իր հշմարտասիրութիւնը ցոյց տալու համար պատմում է իր կեանքից մի անցք, որ համառօտ բերում ենք։ Գէորգ Գաթողիկոսի ժամանակ եւ ասացի։ «Այո՛, Վեհափառ Տէր»։ Յետոյ կաթողիկոսը աւելացրեց. Ժորէն վարդապետ, քո լեզուն քո գլխին շատ փորձանք կը բերէ։

դարձեալ յամառութեամբ կրկնում է վերոյիշեալ նկատողութիւններից շատերը եւ աւելացնում. ուսուցիչները քանդում են. եկեղեցին նոյնպէս քանդում են. ոչինչ չեն սովորեցրել, «անտէր մանուկներին» մահացման դուռն են հասցրել, եւ ճարտասանական ծեւերով իր բորբոքման գագաթնակէտին հասնելով՝ բացանջում է. «Ճնողներ, գնացէ՛ք, դագաղներ պատրաստեցէք ձեր որդիների համար. սորանից յետոյ դուք դատեցէք ուսուցիչներին»։ այս է Խորէն եպիսկոպոսի եկեղեան ժողովում ասածների համառօտ ամփոփում, ֆորկարող է ամեն մի թամաշաչի Մոզդոկեցի վկայել։ Մինչեւ անգամ երբ Սրբազնը իր ամբարած բոլոր ամբաստանութիւնները թափում է ուսուցիչների գլխին վերջացնում, ժողովականներից մէկն առաջարկում է. «Սրբազնն հայր, ոչ մի տեղ, ոչ մի օրէնք չի ընդունում, որ մէկին նրա բացակայութեան ժամանակ բացարձակ ու իրապարակով դատապարտեն եւ նրանից ոչ մի բացատրութիւն չը պահնջեն։ Թոյլ տուէք ուսուցիչներին գալ եւ բացատրութիւն տար»։ Գերապատիւ նախագահը քիչ լուերուց յետոյ՝ պատասխանում է կամացուկ, թէ այստեղ դատաստան չենք անում, այլ իմ կարծիքն եմ յայտնում։ Ժողովրդին դիմել թէ դուք դատեցէք եւ ապա ասել, թէ իմ կարծիքն եմ յայտնում՝ պարզում է Խորէն եպիսկոպոսի իսկական նպատակը, այն է՛ գրգռել ժողովրդին ուսուցիչների դէմ։

Ի՞նչ սրտով միւս օրը կարող էին դպրոց մտնել ուսուցիչները. նրանք հաւատացած էին, որ նոյն խայտա-

ժամանակ Խրիմեանը Կ. Պոլսի պատրիարք էր. մի հրաւերքում ուզրում էի այժմեան Վեհափառի կենացը խմել, որին այն ժամանակ թէն չէի հանաչում, բայց յարգում էր, իսկ Գէորգ Գաթողիկոսը չէր համակրում նրան։ Որպէս զի Գէորգ Գի-ին տիանութիւն ըը պատճառեմ եւ մի եւ նոյն ժամանակ Խրիմեանի կենացը խմած լինեմ, այսպէս առաջարկեցի. տաճկահայոց եւ նրանց ներկայացուցիչ պատրիարքի կենացը։ Լուրջ իսկոյն հասցրին Գէորգ Գի-ին. Կաթողիկոսն ինձ կամնչեց ու հարցրեց՝ Խրիմեանցի կենացը խմել ես. ես չը կարողացայ սուս խօսել եւ ասացի. «Այո՛, Վեհափառ Տէր»։ Յետոյ կաթողիկոսը աւելացրեց. Ժորէն վարդապետ, քո լեզուն քո գլխին շատ փորձանք կը բերէ։

ռակութիւնը կարող է կրկնուել եւ աշակերտների առաջ, եւ շատ դառն պտուղ տալ, մանաւանդ՝ որ նախընթաց օքը Խորէն եպիսկոպոսը աւագ ուսուցչին սպառնալով ասել էր: «Դուք վերեւից պատրաստուած էք եկել, ես ձեզ ցոյց կը տամ»; Անսպասելի իետեւանքներից խուսափելով, ուսուց. խումբն ընտրեց երկու չարից փոքրագոյնը. նա յայտարարութիւն տուեց Սրբազնին, որ «Ժամանակաւորապէս» իեւանում է դպրոցից՝ իր վերայ բարդուած հրապարակային ամբաստանութիւնները փարատելու համար Վեհափառ Կաթողիկոսից քննութիւն խնդրելով: Զք նայելով աշակերտների եւ աշակերտուիինների լաց ու կոծին, Խորէն եպիսկոպոսը փակում է դպրոցները մինչեւ Օգոստոսի 20-ը, մանուկների առաջ էլ կրկնելով իր ամբաստանութիւնները եւ միմիթարելով նրանց, որ աւելի լաւ ուսուցիչներ պէտք է բերել տայ: Եթէ ուսուցիչները Ֆիշտ որ դպրոցն եւ եկեղեցին քանդողներ էին, Խորէն եպիսկոպոսը լիակատար իշխանութիւն ունէր՝ իսկոյն եւ եթ արձակելու. իսկ իրապարակական ժողով անել եւ հայիոյելով գրգուել ժողովրդին ուսուցիչների դէմ, կարծում ենք ոչ մի իշխանաւոր, ոչ մի փոքր ի շատէ կրթուած մարդ իրան թոյլ չի տալ:

Այս անցքից յետոյ երկու հաջուետես ուսուցիչները, Ս. Մտեփանոս Եկեղեցու երեցփոխանը եւ ժողովրդից էլ երկու պատգամաւոր շտապում են Խոր-Նախիջեւան Վեհ. Կաթողիկոսին բողոքելու ո՛չ միայն դպրոցական շփոթութիւնների մասին, այլ եւ հասարակութեան մէջ ընկած պառակտումների եւ խուզութիւնների պատճառները բացադրելու: Խորէն եպիսկոպոսը՝ լսելով նրանց մեկնումը, ինքն էլ աճապարում է նախիջեւան: Միւս օքը իետեւումն երեցփոխանական գործերում մեղադրուած եւ Սրբազնի շնորհիւ նորընտիք երեցփոխ պ. Մ. Կաթեւնիկեանցը—Սըրբազնի ջերմ եւ իովանաւորուած պաշտպանը եւ քաղաքագլուխ ու իոգաբարձու պ. Մ. Ալադաթեանցը: Խորանք մի օք ուշանում են, որովհետեւ զանազան պարսաւելի միջոցներով, որ այստեղ չենք յիշում, խնայելով թէ՛ եպիսկոպոսի եւ թէ քաղաքագլուխ պատիւը, կազմել են տալիս

մի համախօսական, որտեղ առանց մի ոք եւ պատճպուաբանութեան ուսուցիչներին մեղադրում են ժողովրդի մէջ խուզութիւններ մտցնելում: Երեւի վեց տարուայ լնթացքում քնած են եղել եւ միայն Խորէն եպիսկոպոսի գալն է զարթեցրել: Բաւական է այստեղ յիշել, որ շատերը հազիւիրանց անունն ստորագրել իմանալով, համախօսականի բովանդակութեան անմիջապէս չեն կարողացել տեղեկանալ. իսկ ստորագրել տուողները ասել են՝ թէ Սրբազնի համար շնորհակալութիւն է: Այդ ստորագրութիւններն էլ վաւերացրել է արդէն յայտնի եւ գործակալութիւն ստացած Տէր-Գաբրիէլը—կեղծ հաշուեմատեան կազմողը:

Վեհափառ Կաթողիկոսն առնելով հաշուետեսներից բոլոր վաւերաթղթերը, խոստանում է գչքթին կանոնաւոր ընթացք տալ, իսկ դպրոցի հարցը յանձնում է Կարապետ Սրբազնին քննելու ու հաշտեցնելու երկու կողմը: Կարապետ Սրբազնն էլ կանչում է ժողովրդի իինգ ներկայացուցիչներին եւ Խորէն եպիսկոպիսի Մողդոկ գալուց յետոյ ուսուցիչների դէմ նոր դուրս ընկած հակառակորդներին եւ տեղեկանում գործի էութեան: Ուսուցիչները պատրաստ էին ամեն զիշողութիւն անել դպրոցները բանալու համար, ի նկատի առնելով ծնողների բազմաստորագիր հեռագիրը Վեհափառի անունով եւ հաւատացած լինելով, որ Վեհ. Կաթողիկոսը, Եթէ ոչ հիմա, երբ իր Պետերբուրգ գնալու հոգսերով է զբաղուած, գոնէ մի առժամանակ յետոյ առանձին ուշադրութիւն կը դարձնէ եւ մի անաշատ քննիչ կուլարկէ, որպէս զի ոչ միայն դպրոցներն ազատէ բարդուած ամբաստանութիւններից, այլ եւ Եկեղեցական-ծխական ու քահանայական կրկնակի խառնաշփոթած գործերը մաքրէ: Սակայն ի զուր անցաւ մինչեւ անգամ նախիջեւանի թեմ. դպրանոցի յարգ. ուսուցիչների միջամտութիւնը դպրոցների բացման համար: Խորէն եպիսկոպոսը չը համաձայնեց, եւ այդ բանում նրան իրանց ծառայութիւնը մատուցին նրա երկու պաշտպանները, որոնք կարծես Եկել էին դպրոցների փակմանը նպաստելու: Բայց ո՞վքեր էին այդ պաշտպանները. մէկն արդէն յայտնի նորընտիք երեցփոխն էր, իսկ միւսը՝ քաղաքագլուխ եւ

իոգաբարձու պ. Ակադամեանցն էր, որը ինչպէս ինքը խոստովանեց Կարապետ Սրբազնի առաջ, իր վեց տարուայ հոգաբարձութեան միջոցին ոչինչ չի արել եւ ոչ մի անգամ դասերին ներկայ չի եղել: Վեց տարի հոգաբարձուէ մնացել, որովհետեւ նրա բախտից նօր ընտրութիւն չի եղել, թէեւ ժամանակը երեք տարի առաջ է լրացել: Հոգաբարձու պ. Ակադամեանցի դպրոցների համար կրած միակ նեղութիւնն այն է եղել, որ դպրոցապատկան գումարներից 1000 ր. տոկոսով եւ առանց մի որ եւ է մուրհակի երեք տարի ալահել է եւ պահում է, իր անձը վետանգի ենթարկելով եւ դպրոցական կանոնքի 38 յօդ-ի հակառակ գնալով: Ահա այդ մարդիկն էին եկել հաստատելու ուսուցիչների անգործունէութիւնը եւ խոռվարութիւնը:

Ամփոփենք ասածներս. Մինչեւ Խորէն եպիսկոպոսի Մոզդոկ գալը՝ ժողովրդի մէջ երկպառակութիւն չը կար, ժողովուրդը միացած ուժով աշխատում էր իր անարժան քահանաներից՝ այդ եկեղեցու ցեցերից ազատուել եւ եկեղեցին փոքր ի շատէ մաքրել: Դպրոցներն արդէն այդ ցեցերից մաքրուելով՝ կանոնաւոր ընթացքի մէջ էին մտել: Կազմուելէր երգեցիկ քառաձայն խումբ, որ ամեն կիրակի եւ տօն օրերին եկեղեցում երգելով եւ դպրոցական հանդէսներին մասնակցելով, մեծ միջիթարութիւն էր պատճառում ժողովրդին:

Խոկ Խորէն եպիսկոպոսի քննութեան իետեւանքն ի՞նչ եղաւ. ժողովրդի մէջ սերմանեց պառակտումներ, նրանց անձնական ստոր կրքերը գրգռելով: Եկեղեցու մէջ բուն դրին նոր ցեցեր Խորէն եպիսկոպոսի աջակցութեամբ. կեղծ հաշիւներ կազմող քահանան գործակալութիւն ստացաւ, իսկ այդ հաշիւների տակ ստորագրողը—երցիւխութիւն: Դպրոցները փակուեցան եւ դարձեալ յանձնուեցան դպրոցների վաշեմի բարեկամ Տէր-Դաբրիէլին: Երգեցիկ խումբը զգուած ցրուեցաւ: Խորէն եպիսկոպոսի գումարած ընդհանուր ժողովների արձանագրութիւնները մնացին եւ մնում են Մոլլոկումը չը ստորագրած, թէեւ դրանց հիման վերայ Սրբազնն իր եզրակացութիւնները պէտք է

ներկայացնէ Վ.Ե. Կաթողիկոսին: Մեր խօսքը վերջացնում ենք Խորէն եպիսկոպոսի քարոզի գեղեցիկ բնաբանով. «Վարդապետ, բազում աշխատեցաք եւ ոչինչ կալաք»: Եթէ ձկնորս առաքեաները այժմս լինէին, գուցէ եւ աւելացնէին—եղած ուռկաններն էլ պատուեցինք: Թող ներողամիտ լինի Խորէն եպիսկոպոսը, որ մի քանի դէպքեր կը բնատուած են պատմութիւնից՝ շատ չերկարացնելու պատճառով եւ ցանկալի էր՝ որ նա կէտ առ. կէտ պատասխանէր, գուցէ գործի էութիւնը աւելի կը պարզուէր եւ գուցէ նա այդպէս վարուելով աչքի առաջ է ունեցել մի մեծ նպատակ:

1895, Յունիսի 20, Մոգբոկ:

Երեցփոխք	<table border="0"> <tr> <td>Դրիգոր Լիսիցեանց.</td></tr> <tr> <td>Սերովք Գանցումեանց.</td></tr> </table>	Դրիգոր Լիսիցեանց.	Սերովք Գանցումեանց.	
Դրիգոր Լիսիցեանց.				
Սերովք Գանցումեանց.				
Ուսուցիչներ	<table border="0"> <tr> <td>Գ. Քուրայիսեանց.</td></tr> <tr> <td>Ս. Շահնամեան.</td></tr> </table>	Գ. Քուրայիսեանց.	Ս. Շահնամեան.	
Գ. Քուրայիսեանց.				
Ս. Շահնամեան.				
Հաշուատես	<table border="0"> <tr> <td>Ա. Շահիշշանեան.</td></tr> <tr> <td>Յ. Բաղչեան.</td></tr> </table>	Ա. Շահիշշանեան.	Յ. Բաղչեան.	
Ա. Շահիշշանեան.				
Յ. Բաղչեան.				
Հաշուատեսներ	<table border="0"> <tr> <td>Գ. Նասիբեկեան.</td></tr> <tr> <td>Կ. Ղափամեանց.</td></tr> <tr> <td>Ա. Զաշիտեանց.</td></tr> </table>	Գ. Նասիբեկեան.	Կ. Ղափամեանց.	Ա. Զաշիտեանց.
Գ. Նասիբեկեան.				
Կ. Ղափամեանց.				
Ա. Զաշիտեանց.				

Արովիթետեւ մեղադրուողների վկայութիւնները՝ որոշ չափով ցոյց են տալիս մեր ժողովրդի հասկացողութիւնը հասարակական գործի մէջ եւ ղեկավարների բարեխղթութիւնը, առաջ ենք բերում դորանցից ամփոփի կերպով մի քանիսը, որոնք կարող են իետաքքեր լինել:

Գործակալ Թաղէսոս ա. քահանայ Խոսքովեանցի վրկայութիւնները: ա) Բերած գրածի ժամանակը լաւ չեմ մտաբերում եւ չեմ էլ յիշում, թէ ինչ հանգամանքից ստիպուած առձեռն դրամի Թուերը քերել եմ ու փոխել եւ ծախքի մէջ 130 համարի տակ աւելացըել եմ 1778 թ. 45 կոպ.: բ) Կոնսիստորի իրամանները չեմ կատարել, ինձ հրամայուած է եղել, ընդիանուը եկեղեցեաց ծխականներին ժողովել, բայց ես իրաւիրել եմ 1895 Թուի Յունուարի 22-ին միայն Ս. Աստուածամօր Եկեղեցու ծխականներին: Այդ ժողովը փակեցի, որովիթետեւ երեկոյեան 6 ժամին գնացի քաղաքիս ոստիկանապետի մօտ յայտնելու ժողով կայացնելու մասին, բայց նա ինձ անձամբ չընդունեց, այլ ծառայի բերանով յայտնեց, թէ ժամանակ չունի ընդունելու եւ այս երեկոյ ժողով կայացնելու էլ իրաւունք չի տալիս: Իսկ երկրորդ իրամանից ու իեռագրից յետոյ ժողով չը իրաւիրեցի, որովիթետեւ անձբեւներ, ցեխեր ու անյարմարութիւններ կային:

Երեցփոխ Սուբքիաս Կաժեւնիկեանցի վկայութիւնները: ա) 2 պ. 189 թ. որ պակասելէ 1893 Թուի վերջին հինգամսեակում ընդունում եմ ինձ վերայ, բայց հաշուի մէջ սխալուել եմ: բ) 1893 Թուի նոյեմբեր ամսի հաշուում առձեռն դրամի քերած գրածի մասին եւ պակսեցըածի մասին հարցըէք իայր գործակալին, իսկ պակսացըած 69 թ. 90 կ. ես ընդունում եմ ինձ վերայ, իմ մեղքս է: գ) Թէ ինչո՞ւ սեւագիր մատեանում մոժավաճառութեան արդիւնքը ամենայն ամիս աւել է գրած, իսկ ժապաւինեալ

մատեանում պակաս, միտքս չի գալիս: դ) Դրամարկը եկեղեցու փողերի համար չեմ պահել առանձին, որովիթետեւ չեմ իմացել, որ պէտք է առանձին լինի:

Դարձեալ գործակալի ցուցմունքները հանգուցեալ երեցփոխ Դաք. Թուշմալեանցի մասին: ա) Հանգուցեալ երեցփոխ Դաք. Թուշմալեանցին շատ եմ յիշեցըել անգիր պահուած հաշիւների մասին եւ այդ պատճառով նա ինձ իետ թշնամացել էր. նա չէր ընդունում. դորա մասին ես իոգեւոր իշխանութեան չեմ յայնել: բ) Երեցփոխի կենդանութեան ժամանակ հաշիւները չեմ ստուգել, որովիթետեւ չէր թոյլ տալիս: գ) Երեցփոխի վախճանելուց յետոյ Կոնսիստորին լինանից առաջարկեցի չորս հաշուատես, եւ լինդրեցի հանգուցեալի ազգականներին, որ մի կերպով փողերը դուրս բերեն: դ) Թէ ինչո՞ւ 2 պուդ առած մոմի գինը 3 պուդի է գրուած, չեմ իմանում, կարծեմ որ գրչի սխալ է:

Մինաս Խումարեանցը ցոյց տուեց, որ ինքը ստորագրել է կեղծ հաշիւների տակ հէնց նորա համար, որ իրանից հասկացողները ու առաջաւորները, ինչպէս որ առաջին կարգի վաճառական Մկրտիչ Կաժեւնիկեանցը, ստորագրել էին, եւ այդպէս ընդունուած է մեր ժողովներում:

Յովիաննէս Օթարեանցը եւ Յովիաննէս Կաժեւնիկեանցը ցոյց տուին, որ ստորագրել են խորանում եւ Օթարեանցը ստորագրելիս բացականչել է՝ «Աստուած ազատի մեզ այս փոթանքից»:

Տաճօր. Որովիթետեւ այս գրութիւնը հնարաւորութիւն չեղաւ պարբերական մամուլի մէջ իրաւարակել, ուստի հարկը ստիպեց սորան առանձին բրօշիւրով տպագրել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0156061

